

Ա-22

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ



ԳԵՂԱՄ ԳՐԻԾԱՅԻ ԱԶԱՏՅԱՆ

ԽՈՐՅՈՒԱ-ԱԻՐԻԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(1966-1976թթ.)

Է.00.02 «ՀԱՍԱՇԽԱՐՅԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

մասնագիտությամբ

պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ

ԵՐԵՎԱՆ - 2007



Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական դեկանություն

Պաշտոնական ընդիմախոսներ

Առաջատար կազմակերպություն՝

Պաշտպանությունը կայանալու է 2007թ. հունիսի 18-ին, ժ. 15:00-ին, ՀՀ ԳԱԱ
Արևելագիտության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող ՀՀ ԲՈՅ-ի 006
մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող.,
24 զ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գրադարձանում:

Անդամագիրն առաքված է 2007թ. մայիսի 17-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
պատճական գիտությունների թեկնածու՝

Ա. Կ. Շաքրայան

պատճական գիտությունների դոկտոր՝
Ա. Պ. Փոլայյան

պատճական գիտությունների դոկտոր,
պրոֆ.՝ Վ. Ա. Բայրության

պատճական գիտությունների թեկնածու
Ս. Ա. Մանուկյան

Անդամ

Խ. Արովյանի անվան հայկական
պետական մանկավարժական
համալսարան

Աշխատանքի ընդունության բնութագիր

1. ԹԵՍԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1966-1976թ. խորհրդա-սիրիական հարաբերությունների ուսումնասիրությունն
ունի քաղաքական կարևորություն և գիտական արդիականություն:

Սաքը պատերազմի շրջանում, Երկրեւո աշխարհի պայմաններում, ԱՄՆ-ի և
ԽՍՀՄ-ի գլխավորած խմբավորումների միջև դիմակայությունն ու հակամարտության
խորացումն իր ուղղակի անդրադարձն էր ունենում Մերձավոր Արևելքում, Երարտելով
նաև ԽՍՀՄ-ի և նրա տարածաշրջանային դաշնակիցների միջև հարաբերությունները:

Խորհրդա-արարական հարաբերությունների բաղկացուցիչը համարվող
խորհրդա-սիրիական հարաբերությունների ուսումնասիրվող շրջանն իրավամբ կարել է
համարել դրանց սերտացման ամենաինամիկ փուլից մեկը:

Սաքը պատերազմի այդ շրջանում ԽՍՀՄ-ը հատուկ ուշադրություն էր դարձնում
Մերձավոր Արևելքում Միջայի հետ հարաբերությունների զարգացմանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է վերոնշյալ
շրջանում Միջայի և ԽՍՀՄ-ի միջև քաղաքական, ռազմական, տնտեսական ու
ճշակութային հարաբերությունների համակարգային ուսումնասիրության
կարևորությամբ:

Խորհրդա-սիրիական հարաբերությունների վերոնշյալ ժամանակահատվածի
քննությունը արժեքավոր է նաև այն հանգանաճով, որ հենց այդ շրջանում
գործնականում և ամբողջական իրագործվեցին Երկու Երկրների միջև նախկինում
կնքված պայմանագրերը, և այդ հարաբերությունները դրվեցին որակական նոր
հարության վրա:

Թեմայի ուսումնասիրությունը կարևոր է նաև ուսումնասիրվող շրջանում
խորհրդային Միության մերձավորակելյան հակամարտության մկանամբ տարվող
քաղաքականության առավել ճիշտ ընկալման առումով:

Խորհրդա-սիրիական հարաբերությունների վերլուծությունն օգտակար է ԽՍՀՄ-ի
փլուզումից հետո ռուս-սիրիական հարաբերություններում տեղ գտած
փոփոխությունների արժեվորման և զնահատման տեսանկյունից:

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության թեման ընտրվել է 1966-1976թ. խորհրդա-սիրիական
հարաբերությունների զարգացման և դրանց առանձնահատկությունների հետազոտման
անհրաժեշտությունից: Ելմելով դրանից, հեղինակն իր առջև խնդիր է դրել
ուսումնասիրել հետևյալ առանցքային հարցերը:

- Հիտարկել 1966-1970թթ. Սիրիայում ծախքասականնորի հշխանության շրջանում խորհրդա-սիրիական հարաբերությունների սերտացման նախադրյալներն ու գարգացման ուղղությունները:
- Գոյություն ունեցող սկզբանադրյունների և այլ նյութերի հիման վրա ուսումնասիրել 1966-1976թթ. խորհրդա-սիրիական հարաբերությունների հիմնական ուղղությունները և գարգացման հիմնական առանձնահատկությունները:
- Յնտեղութեալ այդ հարաբերությունները միջազգային, այդ թվում նաև՝ տարածաշրջանային գարգացումների ու քաղաքական գործընթացների համատեքստում:
- Անդրադարձ ուսումնասիրվող շրջանում Սիրիայի Արարական Հանրապետությանը ԽՄՀՄ-ի ցուցաբերած ռազմական աջակցությանը:
- Լուսաբանել ԽՄԿԿ և Արարական սոցիալիստական վերածննդի՝ Բասս կուսակցության միջև հաստատված համագործակցությունը և դրա անդրադարձը երկու երկրների միջապետական հարաբերությունների վրա:
- Ուսումնասիրել 1970թ. Յաֆեզ Սաադի հշխանության գալուց հետո խորհրդա-սիրիական հարաբերություններում տեղ գտած տեղաշարժերը:
- Քննարկել ուսումնասիրվող շրջանում Սիրիայում ընթացող սոցիալ-տնտեսական գործընթացներում ԽՄՀՄ-ի ճամանակցությունը:
- Ուսումնասիրել վերոնշյալ շրջանում խորհրդա-սիրիական մշակութային և գիտակրթական կապերի գարգացման առանձնահատկությունները:

3.ԱՇԽԱՏԱԲԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸԸ

Խորհրդա-սիրիական հարաբերությունների առանձին հիմախնդիրներ քննարկվել են խորհրդային և արևմտյան որոշ հեղինակների աշխատություններում: Սույն աշխատանքում փորձ է արվել համակողմանիրեն, ամբողջական կերպով և նորովի ներկայացնել 1966-1976թթ. խորհրդա-սիրիական հարաբերությունների գարգացման առանձնահատկությունները:

Ներկա աշխատությունն իր բովանդակությամբ և հարցադրումներով հայ արևելագիտության մեջ առաջին ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվում, համադրելով խորհրդային, արևմտյան և արարական տեսակետները, համակողմանիրեն վերլուծել ուսումնասիրվող շրջանում խորհրդա-սիրիական քաղաքական, ռազմական, տնտեսական և մշակութային հարաբերությունները և քացահայտել դրանց գարգացման օրինաչափություններն ու յուրահատկությունները:

4.ԱՇԽԱՏԱԲԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՐՄԱՆԵՐԸ

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 1966-1976թթ. ժամանակահատվածը: 1966թ. հեղափոխության արդյունքում Սիրիայում հշխանության եկավ Արարական սոցիալիստական վերածննդի՝ Բասս կուսակցության ծախակողմյան թվում, որն ընդունեց քաղաքական նոր հայեցակարգ, որի հիմքում ընկած էր «գիտական հիմքի վրա սոցիալիստական հասարակության» կառուցումը: Զախրասականների հշխանության գալուց հետո Բասսի քաղաքական գործիչների վրա գգալի էր ԽՄՀՄ-ի, ճամանակորապես Կոմունիստական կուսակցության գաղափարախոսության ազդեցությունը: Վերոնշյալ հեղաշրջումից հետո ԽՄՀՄ-ի առջև նոր հնարավորություններ քացվեցին Սիրիա ներքափանցելու համար: ԽՄՀՄ-ի հետ տնտեսական համամագործակցության հետևանքով Սիրիայում իրագործվեցին մի շարք տնտեսական ծրագրեր: 1966-1976թթ. խորհրդա-սիրիական հարաբերությունները դրվեցին որակական նոր հարության վրա, որը նշանակում էր նոր փուլ խորհրդա-սիրիական բազմակողմանի հարաբերություններում:

5.ԱՇԽԱՏԱԲԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքում դրված է պատմականության և գիտական օբյեկտիվության սկզբունքը: Աշխատանքում օգտագործվել են պատմա-համամատական և պատմա-վերլուծական քննության մեթոդները, որոնք հնարավորություն են ընծեռում դիտարկել ատենախոսության մեջ քննարկված խնդիրները մեկ ամբողջական համակարգում:

6.ԱՇԽԱՏԱԲԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ առաջ քաշվող հիմնարդույթները, մեկնարանություններն ու եղրահամգումները կարող են օգտագործվել ուսու-արարական հարաբերություններին, ինչպես նաև սաղը պատերազմի դարաշրջանին առնչվող ուսումնասիրություններում և դասախոսություններում:

Աշխատության դրույթները կարող են օգտակար լինել նաև միջայտական հարաբերություններին առնչվող հետազոտությունների և պետական մարմինների համար վերլուծական նյութեր պատրաստելու, ինչպես նաև ուսու-արարական հարաբերությունների նկատմամբ Յայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական մոտեցումների ծգրտման առումով:

7.ԱՇԽԱՏԱՄԵՐԻ ՓՈՐՁՎՔԸՆՆԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴԱՎԱՆԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և հավանության է արժանացել է ԵՊՀ պրարագիտության ամբիոնում և ՀՀ ԳԱԱ Արևելագիտության հիմնախուսության պարագաների բաժնում: Նրա հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած պատմագիտական հոդվածներում, որոնց ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

8.ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՍՈՒՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշխատությունը գրվել է հայերեն, ռուսերեն, արաբերեն և ֆրանսերեն լեզուներով տարաբնույթ աղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա: Դեղինակն աշխատել է Հայաստանի Ազգային, ՀՀ ԳԱԱ Հիմնակազմ և ՀՀ ԳԱԱ Արևելագիտության հիմնախուսության համասկույթի Ասադի անվան, ինչպես նաև Դամասկոսի արաբագիտական հետազոտությունների ֆրանսիական հիմնախուսության գրադարաններում: Ուսումնասիրությանը զգալիորեն նպաստել են հայ և օտարազգի հետազոտողների՝ խնդրո առկա թեմային նվիրված արժեքավոր աշխատությունները, հոդվածները, ինչպես նաև պաշտոնական հրատարակությունները, քաղաքական գործիչների հուշերը, հայտարարություններն ու պարերականները:

Ուսումնափության համար որպես սկզբնադրյուր են ծառայել Սիրիայի և ԽՍՀՄ կառավարությունների արտաքին քաղաքականությանը, արտաքին առևտորին, ինչպես նաև արարական արտաքին քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերի ժողովածուները¹, Սիավորված Ազգերի Կազմակերպության (ԱԱԿ) տարեգրքերը², Արարական սոցիալիստական վերածննդի կուսակցության (ԱԱՎԿ) համաժողովների նյութերի ժողովածուները³, խորիրդային Միության և Սիրիայի առաջնորդների պաշտոնական հայտարարությունների և ելույթների ժաղովածուները⁴:

¹СССР и Арабские страны, 1917-1960, Документы и материалы, М., 1961; Ближневосточный конфликт 1957-1967, из документов архива внешней политики Российской Федерации, Т. II, М. 2003; Внешняя политика Советского Союза в период Отечественной войны, М., 1946-1948; Внешняя политика СССР и международные отношения, Сборники документов за 1966-1967 гг., М., 1967-1977; Документы внешней политики СССР, М., 1957; Документы внешней политики СССР, М., 1966; СССР и ближневосточное урегулирование, 1967-1986. Документы и материалы, М., 1989; Внешняя торговля СССР за 1918-1940 гг., Статистический обзор, М., 1961; Внешняя торговля СССР за 1966-1976 гг., Статистический обзор, М., 1967-1977; ،،الرطاق العربية، بيروت، ١٩٧٤ - ١٩٦٣،

²Industrial Development in the Arab Countries, United Nations Publications, New York, 1975; UN Economic Developments in the Middle East 1962-1967, UN Economic Development in the Middle East 1972-1975, New York, 1971; Объединенные Нации. Доклад Ассамблеи ООН, Официальные отчеты, XXII сессия, Нью-Йорк, 1967;

³Борьба партии Баас за единство, свободу и социализм. Сборник документов. Т. 1-10 Бейрут, 1963-1972; Материалы 9-го общеарабского съезда Баас. Дамаск, 1968; Материалы 12-го общеарабского съезда Баас. Дамаск, 1975; Arab Ba'th Socialist Party, Regional Leadership. – Organizational Report, Damascus, 1965, Documents on the Middle East, Wash., 1969. 'فضل عذاش، المجالس الشعبية والتلبية في الوطن العربي، مجلس الشعب السوري ١٩٨٠-١٩٨٨'

⁴Брежnev L.I. «КПСС в борьбе за единство всех революционных и миролюбивых сил», М., 1972; Брежnev L.I. «О внешней политике КПСС и Советского государства. Речи и статьи». М., 1975; Громыко А.А. Выступления на

Մյուս կարևոր աղյուրը խորիրդային, արաբական և արևմտյան զանազան պարբերականներն են, որոնցից հարկ է նշել ԱԱՎԿ-ի պաշտոնական մարմին «Ալ-Բաասը», կառավարական հրատարակություններ «Աս-Սաուրան» և «Թիջրինը», «Ալ-Ահրամը», արևմտյան և խորիրդային պարբերականներ «Վեհանգայք», «Վրայական», «Կոլուտ» և այլն, առաջարկություններ «NFT», «Events», «New-York Times Magazine», «Middle East Journal», որոնց տեղ են գտել Սիրիայի և ԽՍՀՄ նախագահների, կառավարությունների և պետական բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարություններն ու խորիրդա-սիրիական տարբեր հանաձայնագրեր՝ համապատասխան մեկնարանություններով:

Ատենախոսության մեջ բարձրացվող տարբեր հարցերի լուսաբանմանը մեծապես նպաստել են հայ արաբագետներ Ն. Հովհաննիսյանի, Ռ. Կարապետյանի, Պ. Սարացյանի, Գ. Գրիգորյանի մենագրություններն ու հոդվածները⁵:

Խորիրդա-արաբական, մասնավորապես խորիրդա-սիրիական տնտեսական, քաղաքական և մշակութային կապերի քննությանը, ինչպես նաև ԽՍՀՄ-ի մերձավորակեցված հակամարտության նկատմամբ տարվող քաղաքականության հետազոտմանը մեծապես նպաստել են խորիրդային հենդինակների արժեքավոր աշխատությունները, որոնցից հարկ է նշել Փիր-Բուղադովայի, Վ. Վավիլովի, Վ. Վիկուրովի, Ե. Պրիմակովի, Գ. Միրսկիի Ս. Խվանովի, Վ. Վիմեդովի, Ա. Ֆիլոմինի, Ա. Բելուսովի և այլոց ուսումնափությունները⁶:

⁵ХХI, ХХII, ХХIV, ХХV, ХХVІ, ХХVII-ХХXI сессиях Генеральной Ассамблеи ООН. «Правда», 229.09.66; Косягин А.Н. Заявление правительства СССР об основных вопросах внутренней и внешней политики СССР, - «Правда», 4.08.66; Хафиз Асад, речей. Дамаск, 1971-1981; Хафез Асад, Мир глазами Президента Сирии Хафеза Асада, сборник речей выпущенный Отв. ред. и сост. В. М. Ахмедов и д. Рос. акад. наук. Ин-т востоковедения М., 2000; .،،الأس، حافظ مجموعه خطب، مذكر

⁶ Հովհաննիսյան Ն. , Սարգսյան Ր. , Սիրիան անկախության համար նվաճած պայմանագրը (1917-1946), Երևան, 1975, Հովհաննիսյան Ս. , Լիքանամիան համամերձ համամերձ փերթորդումը, Երևան, 1982, Կարապետյան Երկրորդի նոր և նորագործ պատմություն, Երևան, 2003, Կարապետյան Ո. , Սիրիա-ամերիկյան հայությունները 1967-1996թ., Երևան, 2000, Սարգսյան Պ. , Արարական Արևելքի կոնումիսատական կուսակցությունների և առաջադիմական ուժեղի պայմանագրը դժոնկախայի և սոցիալ-տնտեսական վերափախտությունների համար, Երևան, 1986, Սարգսյան Պ. , 1973թ. արարա-սիրականը պատերազմը և արարականը առաջադիմական ուժեղի փերթորդումը, Սերճավոր և Սիրիան Արևելքի Երկրներ և դղողվորներ, հաստի IX , Արարական Երկրներ, Երևան, 1978; Օգանեսյան Հ. , Образование независимой Сирийской республики, (1939-1946), М., 1968; Григорян Г. , Позиция Сирии в ближневосточном конфликте, Ереван, 1989; его же, Позиция левобаасистского пуководства САР в ближневосточном кризисе (1967-1970 гг.), Ереван, 1984.

⁷ Пир-Будагова Э. Պ., Сирия в борьбе за упрочение национальной независимости (1945-1966), М., 1978; Пир-Будагова Э. Պ., Концепция «Арабского социализма» в идеологии Партии Арабского Социалистического Возрождения Сирии (ПАСВ), в кн. Проблемы современной советской арабистики I: современные политические и социально-экономические проблемы арабских стран, Ереван, 1988; Фիր-ԲուղադովսՊ., Քաղաքական սոցիալ-տնտեսական վերափախտություններ Սիրիայում (1962-1970թ), Սերճավոր և Սիրիան Արևելքի Երկրներ Երևան, 1978; Вавилов В. В., Социально-экономические преобразования в Сирии, М., 1972; Викторов В. П., Социально-экономические преобразования в Сирии. (проблемы и перспективы), М., 1968; Примаков Е., История одного слова: ближневосточная политика США в 70 – е начале 80 – х годов. М., 1985, его же, Анатомия ближневосточного конфликта. М., 1978; Мирский Г. , Армия и политика в странах Азии и Африки. М., 1970, его же, Третий мир. Общество, власть армия. М., 1976; Иванов С. А., Межарабская политика Сирии, Том 1, М., 1986; Ахмедов В., Современная Сирия:

Մերձավոր Արևելքի՝ մասնավորապես Սիրիայի ներքին և արտաքին քաղաքանության, տարածաշրջանային քաղաքական և տնտեսական հիմնախնդիրներին, ինչպես նաև ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի՝ արտաքական արևելքում տարվող քաղաքանության վելուծության տեսանկյունից օգտակար են եղել արևատյան, արար և հրեա մի շարք հետազոտողների աշխատություններ, որոնցից անհրաժեշտ ենք համարում առանձնացնել Պ. Սիլի, Զ. Ակիմի, Վ. Քվանդի, Մ. Մազդի, Ն. Կան-Դամի, Ֆ. Ազամի, Է. Կամովկու, Զ. Գլասմանի, Ռ. Յասովի, Մ. Գոլամի, Կ. Եղիանի, Զ. Ջիլանի, Զ. Ժամերի հետազոտությունները⁷:

промышленность, рабочий класс, профсоюзы. М., 1991; Филоник А., Аграрные проблемы современной Сирии, М., 1981, где же Некоторые итоги эволюции социальной структуры Сирии, Специальный бюллетень № 2 (273), М., 1991; Белоусов А., Кризис и распад колониальной системы империализма. Особенности экономического роста развивающихся стран, М., 1970; Тягуненко В.Л., Освободившиеся страны выбирают путь, Международная жизнь, 1968, номер 3, стр. 77-87; Зеин Л.З., Новые тенденции в экономическом сотрудничестве социалистических и развивающихся стран, М., 1970; Макеева Н.П., Платежные балансы развивающихся стран, М., 1973; Рейнсер Л.И., Развивающиеся страны: очерк теории экономического роста, М., 1974; Шпирт А.Ю., Развивающиеся страны: наука, техника, экономический рост, М., 1975; Гетманц М.З., СССР и страны Азии и Африки, М., 1977; Горбатов О.М., Л.Я. Черкасский, Сотрудничество СССР со странами Арабского Востока и Африки, М., 1973; Готлбер В.М., Экономические проблемы развивающихся стран социалистической ориентации, М., 1973; Максимова М.М., СССР и международное экономическое сотрудничество, М., 1977; Обминский О.Е. Внешнеэкономические связи развивающихся стран, М., 1970; Некрасов А.Я., СССР и развивающиеся страны в ООН, М., 1970; Нихамин С.П., Дипломатия развивающихся стран, М., 1976; Татаровская И.М., Развивающиеся страны в борьбе за мир, М., 1970; Гусаров В.И., Семин Н.С., Страны социализма верные друзья арабских народов, М., 1971; Киселев В.И., СССР и Арабский Восток, М., 1971;; Азов В.Н., Рубинштейн Г.И., Внешняя торговля – инструмент мира и взаимовыгодного сотрудничества, М., 1973; Горбатов О.М. Черкасский Л.Я., Сотрудничество СССР со странами Арабского Востока и Африкой, М., 1973; Клековский Р.В., Советско-арабская торговля и перспективы ее развития, История и экономика стран Арабского Востока и Северной Африки, М., 1975; Корнев С.Г., Научные связи Академии наук СССР со странами Азии и Африки, М., 1976; Самыловский И.В., Научные и культурные связи СССР со странами Азии и Африки, М., 1963; Чертков Д.Г., Андреасян Р.И., Можаев Ю.И., СССР и развивающиеся страны: сотрудничество в области экономики и культуры, М. 1966.

⁷ Devlin F. John. Syria: Modern State in an Ancient land. Boulder, Colorado, 1983; Patrick S., The Struggle for Syria, London 1965; Patrick S., Assad and the Struggle for the Middle East, London 1988; Moshe M. and Avner Y., Syria under Assad, London 1986; Quandt W., Decade of Decisions: American Policy toward the Arab-Israeli Conflict 1967-1976, Berkeley, 1977; Ajami Fouad, Geopolitical Illusions, The Middle East and the Western Alliance, Edited by Steven L. Spiegel, London, George Allen and Unwin, 1982; Kanovsky E., What's Behind Syria's Current Economic Problems?, Tel Aviv: The Dayan Center for Middle Eastern and African Studies, 1985; Glassman J., Arms for The Arabs. The Soviet Union and War in The Middle East, Baltimore and London, 1975; Yaakov R., From Encroachment to Involvement. A Documentary Study of Soviet Policy in The Middle East 1945-1973, N-Y-Toronto, 1974; Golan M., The Secret conversations of Henry Kissinger, New-York, 1976; Efzaim K., The Soviet Union and Syria, the Asad years, London 1988; Hilal R., Culture et développement en Syrie Dans les pays retardés, Paris, 1969; Pennar J., The USSR and the Arabs: The Ideological Dimension, London: C. Hurst, 1973.

7.ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանաբար կազմված է ներաքանչներից, վերջաբանից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ խոսվում է ատենախոսության թեմայի արդիականության, նպատակների ու խնդիրների մասին, հիմնավորվում է նրա տեսական և զործնական նշանակությունը, տրվում է օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը, աշխատության մեթոդաբանական հիմքն ու գիտական նորույթը:

Ատենախոսության սուսան ԳԼՈՒԽԸ «ԽՈՐՃՐԴԱ-ՍԻՐԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՎՈՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1966-1976թթ.», անդրադառնում է խորհրդա-սիրիական հարաբերությունների ձևակորման պատճությանը: Քննության են ենթարկվում ԽՍՀՄ-ի և Սիրիայի միջև քաղաքական հարաբերությունների, ինչպես նաև համագործակցությունը ԽՄԿԿ և Արաբական սոցիալիստական վերածննդի՝ Բասս կուսակցության միջև: Ուսումնասիրվում է նաև ԽՍՀՄ-ի Սիրիային ցուցաբերած ուազմական աջակցությունը:

Գլխի առաջին ենթարակում՝ «ԽՍՀՄ-ի՝ և Սիրիայի միջև քաղաքական համագործակցության սկզբնավորումը» քննարկվում են մինչև 1966թ. խորհրդապարական, նաև ամսավորապես, խորհրդա-սիրիական հարաբերությունների ձևակորման նախադրյաները:

1943թ. Խորհրդային Միությունը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Եգիպտոսի, իսկ 1944թ. նաև Սիրիայի հետ:

2-րդ համաշխարհային պատերազմի շրջանում Սիրիայում մեծ բափ ստացավ ֆրանսիական մանդատի վերացման ուղղված ազգային-ազատագրական շարժումը, որին իր աջակցությունը հայտնեց ԽՄԿԸ-ը:

1946թ. ապրիլի 17-ին անգլ-ֆրանսիական գորքերի դուրս բերմաճք ավարտվեց սիրիական ժողովոյի անկախության համար մղված պայքարությամբ:

1955թ. օգոստոսի 18-ին Սիրիայում նախագահ վերընտրվեց Շուքրի Զուարիին: Նոր կառավագությունը միջոցներ ձեռնարկեց Խորհրդային Միության հետ բարեկամական հարաբերություններն ավելի ամրապնդելու նպատակով: 1955թ. հուլիսի 10-ին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի հրավերով Սոսկվա ժամանեց սիրիական խորհրդարանական առաջին պատվիրկությունը:

Գլխի երկրորդ ենթաբաժնում՝ «Խորհրդա-սիրիական կապերի գարգացումը 1966-1970թթ.» ուսումնասիրվում են ձախրասականների իշխանության գալուց հետո խորհրդա-սիրիական հարաբերությունները, որոնք թևակիխուցին գարգացման նոր փուլ:

1966թ. հեղափոխության արդյունքում Սիրիայում իշխանության եկած «Արաբական սոցիալիստական վերածննդի» կուսակցության ձախակողմյան թևը հօչակեց քաղաքական նոր հայեցակարգ, որի հիմքում ընկած էր «գիտական հիմքի վրա սոցիալիստական հասարակության» կառուցումը:

Սիրիական նոր կառավարության առաջին քայլերից էր երկրի առջև ծառացած տնտեսական և քաղաքական խնդիրները լուծելու նապատակով՝ խորհրդային Միության հետ կապերի ամրապնդումը: Ձախրասականների իշխանության գալուց հետո Քասա-ի քաղաքական գործիքների վրա զգալի էր ԽՍՀՄ-ի, մասնավորապես Կոմունիստական կուսակցության գաղափարախոսության ազդեցությունը: Վերոնշյալ հեղաշրջումից հետո ԽՍՀՄ-ի առջև նոր հարավորություններ բացվեցին Սիրիա ներքափանցելու համար:

1966թ. մայիսին Խարայելը նոր գործողություններ ձեռնարկեց սիրիա-խրայելական սահմանում՝ սրբով տարածաշրջանում առանց այդ էլ լարված իրավիճակը: Ստեղծված պայմաններում Խորհրդային Միությունը մայիսի 28-ին դատապարտեց Սիրիայի ներքին գործերին միջամտելու փորձերը և հայտարարեց, որ ԽՍՀՄ-ն չի կարող անտարբեր մնալ իր երկրին հարող տարածաշրջանում խաղաղությանը սպառնացող վտանգին:

Սակայն Խարայելի սադրանքները շարունակվեցին մինչև 1967թ. հունիսյան պատերազմի սկիզբը: Սիրիա-խրայելական սահմանային գոտում ընթացող ռազմական գործողությունների առնչությամբ ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդը՝ Սիրիայի խնդրանքով, գումարեց արտահերթ նիստ, որի ընթացքում Խորհրդային Միության պատվիրակությունը ջանքեր էր գործադրում ռազմական գործողությունների դադրեցման համար: Խորհրդային ներկայացուցիչն Խարայելի գործողությունները գնահատեց որպես բացահայտ ազրեսիա, որը հակասում էր ՄԱԿ-ի կանոնադրությանն ու միջազգային իրավունքի բոլոր նորմերին, մինչդեռ ԱՍՍ-ը փորձում էր խրայեցնան հարձակումները որպես պաշտպանողական գործողությունները:

ԽՍՀՄ-ի ակտիվ գործողությունների արդյունքում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդը 1967թ. նոյեմբերի 22-ին ընդունեց թիվ 242-րդ բանաձեռ, որի համաձայն նախատեսվում էր՝ 1. Խարայելական գործերի դուրս բերում 1967թ. 6-օրյա պատերազմի ընթացքում գրավված տարածքներից. 2. Տարածաշրջանի ցանկացած պետության տարածքային աճբողջականության և քաղաքական անկախության, ինչպես նաև գոյության իրավունքի ժամանակ: Այդ պետությունների ժամանակած սահմաններում

ապահովության երաշխավորում. 3. Ծովային ազատ երթևեկության ապահովում. 4. Ապառազմականացված գոտիների ստեղծման ճանապարհով երաշխավորել տարածաշրջանի բոլոր պետությունների տարածքային անձեռնմխելիությունը:

1967թ. արաբ-խրայելական պատերազմից հետո, որը զգալի վճառներ հասցեց Սիրիայի տնտեսության ու գինված ուժերին, Խորհրդային Միությունը, Սիրիային համարելով տարածաշրջանում իր հիմնական դաշնակիցներից մեկը, մեծ քանակությամբ ճարտական տեխնիկա և սարքավորումներ տրամադրեց սիրիական կառավարությանը:

1968-1970թթ. ընթացքում խորհրդա-սիրիական հարաբերությունները իիմնականում ուղղված էին մերձավորակեցյան հականարտության խաղաղ կարգավորմանը:

Գլխի երրորդ ենթաբաժնում՝ «Խորհրդա-սիրիական քաղաքական հարաբերությունները 1970-1976թթ.», ուսումնասիրվում են խորհրդա-սիրիական քաղաքական հարաբերությունները՝ Յաֆեզ Ասադի իշխանության գալուց մինչև 1976թ. ընկած ժամանակահատվածը:

1970թ. նոյեմբերին Սիրիայում իշխանության եկած Յաֆեզ Ասադը հրչակեց «ուղղիչ շարժումը», որը երկրի ներքին և արտաքին քաղաքական, ինչպես նաև սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման նոր փուլի սկիզբն էր:

Յաֆեզ Ասադի դեկավարման առաջին տարիներին խորհրդա-սիրիական հարաբերությունները շարունակում էին առաջնային տեղ գրավել երկրի արտաքին քաղաքականության օրակարգում:

Խորհրդա-սիրիական կապերի ամրապնդման գործում մեծ նշանակություն ունեցան 1972թ. երկու երկրների կառավարական պատվիրակությունների փոխադարձ այցելությունները:

1973թ. հոկտեմբերի արաբ-խրայելական պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված նոր իրադրությունը՝ Եգիպտոսի քաղաքական ուղեգիծի փոփոխությունը ու Խարայելի հետ անջատ համաձայնագիր կնքելու մտադրությունը, 1975թ. Լիբանանում բռնկված քաղաքացիական պատերազմը Սիրիային կանգնեցրին մի շարք բարդ խնդիրների լուծման անհրաժեշտության առջև: Ստեղծված իրավիճակը ստիպեց Սիրիային վերանայել իր արտաքին քաղաքականությունը ու փորձել բարելավել իր հարաբերություններն Արևմտյան կուսակցությունների, մասնավորապես ԱՍՍ-ի հետ:

Սիրիայի արտաքին քաղաքականության մեջ տեղ գտած փոփոխություններն ու ԱՍՍ-ի հետ հարբերությունների բարելավմանն ուղղված գործնական քայլերը բացասական անդրադարձ ունեցան խորհրդա-սիրիական հարաբերությունների վրա:

Գլխի չորրորդ ենթաբաժնում՝ «ԽՍՀՄ-ի ռազմական աջակցությունը Սիրիային 1966-1976թ.», քննության է ենթակվում խորհրդային Միության Սիրիային գուցաբերած ռազմական աջակցությունը:

1950-ականների կեսերից սկսած Սիրիայի ռազմական հիմնական մատակարարը ԽՍՀՄ-ն էր: Մեծ էր նաև վերջինիս դերը սիրիացի ռազմական մասնագետների պատրաստման գործում, որոնք զինվորական ուսուցում էին ստանում ինչպես Սիրիայում, այնպես էլ ԽՍՀՄ-ի ռազմական ուսումնական հաստատություններում: 1960-ականների կեսերին Սիրիայում աշխատող խորհրդային ռազմական մասնագետների թիվը հասնում էր 150-ի:

1962-1963թ. ԽՍՀՄ-ը Սիրիային տրամադրեց ԻԼ-28 տեսակի ռմբակոֆիչներ և 2544 տիպի երկու ականագերծիչ նավ: 1964-1965թ. ԽՍՀՄ-ը Սիրիային տրամադրեց S-54U տիպի տանկեր, ՄԻԳ-21 տեսակի կործանիչներ, 6 հրթիռակիր ռազմանավ, զրահավոր փոխադրիչ մեքենաներ, հրետանային համակարգեր և այլ տիպի ռազմական տեխնիկա: Խորհրդային ռազմական մատակարարությունները մեծապես նպաստեցին Սիրիայի մարտական տեխնիկայի մեծացմանը, ինչը իր հերթին նպաստեց ռազմական ուժերի քայլացմանը: 1963-1967թ. երկրի զինված ուժերի թիվն ավելացավ 15.000-ով:

1967թ. արաբա-խրայելյան 6-օրյա պատերազմի օրերին Սիրիան ԽՍՀՄ-ից և Չեխոսլովակիայից ստացավ 100 ՄԻԳ-21 տիպի կործանիչ: 1967թ. հոկտեմբերին տարրեր տվյալներով օրական 60-90 ռազմական թենհատար ինքնաթիռներ էին վայրէցք կատարում սիրիական և եգիպտական օդանավակյաններում:

1970-ականների կեսերին Սիրիայում աշխատող խորհրդային ռազմական մասնագետների թիվն արդեն հասնում էր 560-ի:

1974-1976թ. ԽՍՀՄ-ը Սիրիային տրամադրեց ՄԻԳ-23Մ, ՄԻԳ-21, ՄԻԳ-23Բ և Սու-22 տիպի կործանիչներ, 600 տանկ, 10 Ս-23 տիպի հեռահար թնդանոր, Կա-25 տիպի 9 ուղղաթիռ և այլ ռազմական տեխնիկա:

Ատեմախոսության Երկրորդ գլուխը՝ «ԽՈՐՃՐԴԱ-ՍԻՐԻԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱ-ՏԵՏԵՍՎԱԾ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 1966-1976թ.», անդրադարձում է խորհրդասիրիական առևտուրային, ֆինանսական, տնտեսական և տեխնիկական հարաբերություններին:

Գլխի առաջին ենթաբաժնում՝ «Խորհրդա-սիրիական առևտուրանության համագործակցության ընդհանուր բնույթները», քննարկվում են խորհրդա-սիրիական տնտեսական համագործակցության ընդհանուր դրույթները:

ԽՍՀՄ-ի և Սիրիայի միջև առևտուրա-տնտեսական կապերը սկսեցին զարգանալ, հատկապես Սիրիայի անկախացումից հետո, որի շնորհիվ նա հնարավորություն

ստացավ ինքնուրույն որոշել թե, որ երկրի հետ ինչ պայմաններով զարգացնել իր արտաքին տնտեսական կապերը: Դանով իսկ Սիրիայի տնտեսության տարրեր ոլորտներում վերջ դրվեց արևատյան մենաշնորհներին:

Սիրիան դարձավ արաբական առաջին երկիրը, որը 1957թ. հոկտեմբերի 28-ին ԽՍՀՄ-ի հետ ստորագրեց տնտեսական և տեխնիկական համագործակցության վերաբերյալ համաձայնագիր:

Իհարկե Սիրիայի մերձեցումը ԽՍՀՄ-ի հետ չեղ կարող դրվս մնալ արևատյան երկրների, հատկապես ԱՄՆ ուշադրությունից: ԱՄՆ-ն ամեն կերպ ջանում էր խոչընդոտել խորհրդա-սիրիական տնտեսական համագործակցության անրապնդմանը, փորձելով իր կողմը գրավել Սիրիային: Արևմուտքում քաջ գիտակցում էին, որ Սիրիայի տնտեսական հզորացումը կարող է խախտել ուժերի հավասարակշռությունը Մերձավոր Արևելքում և թուլացնել ԱՄՆ-ի քաղաքական դիրքերը տարածաշրջանում:

Գլխի երրորդ ենթաբաժնում՝ «Խորհրդա-սիրիական առևտուրային կապերը 1966-1976թ.», ուսումնասիրվում են ԽՍՀՄ-ի և Սիրիայի միջև արտաքին առևտուրային ակպերի առանձնահատկությունները:

1966-1968թթ. առևտուրային համագործակցության վիճակագրական տվյալների համաձայն, երկու պետությունների միջև ապրանքային շրջանառությունն ունեցել է հետևյալ ցուցանիշները. 1966թ.՝ 38,7 մլն. ռուբլի, 1967թ.՝ 47,2 մլն. ռուբլի, 1968թ.՝ 56,7 մլն. ռուբլի:

1968թ. կնքվեց նոր համաձայնագիր, որով ապրանքափոխանակման վերաբերյալ 1965թ.-ից գործող պայմանագրի ժամկետը երկարձգվեց մինչև 1970թ.: Նոր պայմանգրով նախատեսվում էր երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը մեծացնել 1,5 անգամ:

ԽՍՀՄ-ից մեկրված ապրանքները բավարարում էին Սիրիայի՝ մեքենաների և սարքավերումների պահանջարկի 50%-ը, փայտանյութի՝ 40%-ը, դիգելային վառելիքի 35%-ը և սև մետաղների 25%-ը: Միայն 1968թ. ԽՍՀՄ-ից Սիրիա արտահանվող սարքավորումների ընդհանուր արժեքը կազմում էր ամբողջ Երկրման 75%-ը:

Առևտուրային կապերի գարգամանն ուղղված հաջորդ քայլը 1976թ. հունվարի 1-ին Դամասկոսում կնքված առևտուրային համագործակցության վերաբերյալ պայմանագիրն էր, որը ուժի մեջ էր մինչև 1980թ.: Վերոնշյալ համաձայնագրով նախատեսվում էր 50%-ով ավելացնել երկու երկրների միջև առևտուրա-տնտեսական համագործաշրջանառության ծավալը:

Բացի մեքենաներից ու սարքավորումներից, ԽՍՀՄ-ը Սիրիա էր արտահանում նաև ցինկապատ մետաղաբերեր, թիթեր, չուգուն, յուղեր, դեղամիջոցներ, անվաղողեր, թիմիական ապրանքներ և այլն: 1976թ. Սիրիա ներմուծված մեքենաներն ու

սարքավորումները կազմում էին ԽՍՀՄ-ից մերկրված ապրանքների 84%-ը: 1976թ. առաջին անգամ Սիրիայից ԽՍՀՄ արտահանվեցին ցիտրուսային հյութեր և տրիկոտաժային ապրանքներ: Նոյն թվականին խորհրդա-սիրիական առևտորային ապրանքաշրջանառության ընդհանուր գումարը կազմում էր 235,4 նվ. ռուբլի:

1966-1976թթ. խորհրդա-սիրիական առևտորային կապերն, ընդհանուր առմանք, կարելի է զնահատել արդյունավետ: Դրան նպաստում էին երկարաժամկետ առևտորային համաձայնագրերը, որոնցով հստակեցվում էին ապրանքափոխանական ծավալները, գները և վճարման մեխանիզմները: Այդ ժամանակահատվածի խորհրդա-սիրիական առևտորային համագործակցությունը մեծապես նպաստեց նաև Սիրիայի արտահանման ծավալների որոշակի ավելացմանը, և հիմք դարձավ ԽՍՀՄ-ի հետ հետագա առևտորային համագործակցության համար՝ մեծ ազդեցություն ունենալով, ընդհանրապես երկու երկների հարաբերությունների ամրող վրա:

Գլխի նորորոշ ենթաքամում՝ «Խորհրդային Միության տնտեսական ու տեխնիկական աջակցությունը Սիրիային 1966-1976թթ.», հետազոտվում է ԽՍՀՄ-ի տեխնիկական աջակցությունը Սիրիայի համար տնտեսական կառնոր նշանակություն ունեցող կառույցների շինարարության գործում:

Խորհրդային Միության և Սիրիայի Արարական Համբապետության միջև տնտեսական ու տեխնիկական համագործակցության սկիզբը դրվեց 1957թ. հոկտեմբերի 28-ին ստորագրված համաձայնագրով:

1966թ. ապրիլին Մոսկվայում ստորագրվեց տնտեսական համագործակցության վերաբերյալ կառնոր մի պայմանագիր, որը վերաբերվում էր հողերի ոռոգման և էլեկտրաէներգիային արտադրման համար Եփրատ գետի վրա հիդրոհամալիրի կառույցմանը: Այս կառույցը դարձավ խորհրդա-սիրիական տեխնիկական համագործակցության ամենախոշոր նախագիծը:

Տնտեսական և տեխնիկական համագործակցության ընդլայնման նոր ոլորտներին էր վերաբերվում նաև 1969թ. հունիսի 10-ին Կնքված համաձայնագիրը, որով ԽՍՀՄ-ը պատրաստակամություն հայտնեց Սիրիային աջակցել հետևյալ բնագավառներում՝ նավթարդյունաբերություն, էլեկտրաէներգիայի արտադրություն և մատակարարում, երկարգժերի կառույցում, ոռոգման ցանցի և Եփրատի ջրամբարտակի շրջանում 17 հազար հա հողատարածքի մշակման համար անհրաժեշտ տեխնոլոգիաների ու սարքավորումների մատակարարում:

Սիրիայի համար մեծ նշանակություն ունեցավ 1972թ. փետրվարի 25-ին Դամասկոսում ստորագրված տնտեսական և տեխնիկական համագործակցության վերաբերյալ մեկ այլ պայմանագիր ևս, որի համաձայն ԽՍՀՄ-ը Սիրիային պետք է աջակցեր նավթի հանույթի ոլորտում: Այն նախատեսում էր հետազոտական,

որոնողական ու գիտատեխնիկական աշխատանքների ընդլայնում վերոնշյալ բնագավառում: Խորհրդային կողմը պարտավորվում էր նաև իր Վերջնել Դամասկոս-Շոմ երկարգժի կառուցումն ու հիդրոերկրաբանական և հիդրոէլեկտրական հետազոտությունների անցկացումը Սիրիայի արևմտյան շրջաններում՝ ներառելով ջրային պաշարների օգտագործման սխեմայի կազմումը: ԽՍՀՄ-ը հանաձայնվեց նաև օգնություն ցուցաբերել Լարաքիա նավահանգստի ընդլայնման, լուսածնահանքերի (Փոսֆորիտներ) ու բետոնային կավի հանքավայրերի մշակման, քիմիական, ինչպես նաև թերևն և ծանր արդյունաբերության գործարաններ կառուցելու գործում:

Անգնահատելի էր խորհրդային Միության դերը Սիրիայի բնական պաշարների հայտնաբերման և մշակման գործում: Ենթազոտական աշխատանքների արդյունքում երկրի ընդերքում հայտնաբերվեցին նավթ, գազ, երկար, քրոն և այլ բնական պաշարներ: Խորհրդային մասնագետների աջակցությամբ անցկացվեցին երկրաբանական աշխատանքներ, կազմվեցին Սիրիայի երկրաբանական քարտեզները:

Խորհրդա-սիրիական տնտեսական և տեխնիկական համագործակցության խոշոր բնագավառն էր տրանսպորտային շինարարությունը: Այս գլխավորաբես իրագործվեց երկարգժերի կառույցման, ինչպես նաև գոյություն ունեցող ճանապարհների վերակառուցման ոլորտում: 1958թ. Կամչչլի-Լարաքիա, Շոմ-Դամասկոս ու Տարտուս-Աքքար երկարուղային գծերի կառույցման նպատակով իրագործվեցին նախագծային աշխատանքներ:

Սիրիայում ԽՍՀՄ-ի աջակցությամբ կառուցված և վերանորոգված ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում էր 1454 կմ:

Գլխի նորորոշ ենթաքամում՝ «Սիրիայի և Խորհրդային Միության ֆինանսավարկային հարաբերությունները 1966-1976թթ.», բնարկվում են ԽՍՀՄ-ի Սիրիային տրամադրած վարկերը, դրանց մարման պայմաններն ու ժամկետները:

Ինչպես արդեն նշեցինք, 1966-1976թթ. Սիրիան եական ծեռքբերումներ ունեցավ տնտեսության ոլորտում. կառուցվեցին գործարաններ, ջրամբարներ, ավտոճանապարհներ, երկարգժեր և երկրի համար կառնոր նշանակություն ունեցող այլ կառույցներ: Վերոնշյալ շինարարական աշխատանքների համար պահանջվում էին ֆինանսական հսկայական ներդրումներ, որոնք իրագործվեցին խորհրդային Սիրիայն տրամադրած վարկերի և փոխառությունների օգնությամբ:

ԽՍՀՄ-ի և Սիրիայի միջև ֆինանսավարկային հարաբերությունները կարգավորվում էին վարկային հատուկ համաձայնագրերով կամ տնտեսական և տեխնիկական համագործակցության պայմանագրերով, և երկու պետությունների առևտորատնտեսական կապերի զարգացման անհրաժեշտ պայման էին:

Տնտեսական և տեխնիկական համագործակցության վերաբերյալ դեռևս 1957թ. կնքված առաջին պայմանագրի համաձայն, որը վերահաստատվեց 1964թ. օգոստոսի 26-ին, Խորհրդային Միությունը պարտավորվեց Սիրիային տրամադրել վարկեր: Երկրաբանական հետազոտությունները կատարող Խորհրդային կազմակարգություններին ֆինանսավորելու, ինչպես նաև հումքի և սարքավորումների տեղափոխման ծախսերը հոգալու նպատակով, Խորհրդային Միությունը Սիրիային տրամադրեց 78,75 մլն ռուբլի արժողությամբ վարկ 2.5% տարեկան տոկոսադրույթով, 12 տարի մարման ժամկետով:

Համաձայն 1966թ. դեկտեմբերի 18-ին Եփրատի հիդրոհամալիրի առաջին բլոկի շինարարական աշխատանքների տնտեսական ու տեխնիկական աջակցմանը վերաբերող Սիրիայի և Խորհրդային Միության միջև կնքված մեկ այլ պայմանագրի, ԽՍՀՄ-ը Սիրիային տրամադրեց 120 մլն ռուբլու վարկ տարեկան 2,5% տոկոսադրույթով, որի մարումը պետք էր սկսել առաջին բլոկի շահագործումից մեկ տարի անց: Նախատեսվում էր, որ Վարկի տոկոսները պետք է հաշվարկվեին համապատասխան մասի օգտագործման օրվանից սկսած և վճարվեին նրա տրամադրմանը հաջորդող տարվա առաջին եռամյակում: Վարկի մարումը նախատեսվում էր ապրանքների մատակարարման տեսքով:

1972թ. փետրվարի 25-ին կնքվեց և մեկ համաձայնագրի, որով նախատեսվում էր Սիրիային տրամադրել վարկ 21 մլն ռուբլու չափով՝ 12 տարի ժամկետով, 2,5% տարեկան տոկոսադրույթով՝ Դամասկոս-Յոնս երկարգի շինարարությանն աջակցելու և Սիրիայի արևմտյան շրջաններում հիդրոերկրաբանական հետազոտություններ անցկացնելու նպատակով: Ըստ այդ համաձայնագրի՝ Խորհրդային կազմակերպություններն ապահով էին սիրիական կազմակերպություններին մատակարարում էին 25 մլն ռուբլի գումարի չափով սարքավորումներ և տեխնիկական պարագաներ, որոնց դիմաց վճարումը պետք է կատարվեր ուր տարվա ընթացքում՝ տարեկան 2,5% հավելմամբ:

Ատենախոսության ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «ԽՈՐՅՈՂ-ՍԻՐԻԱԿԱՆ ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ 1966-1976թթ.», անդրադառնում է Երկու պետությունների մշակութային և գիտակրթական համագործակցությանը խնդրո առարկա ժամանակաշրջանում:

Գլխի առաջին Ենթարամնում՝ «Խորհրդա-սիրիական գիտական համագործակցությունը 1966-1976թթ.», մերկայացվում են Երկու երկրների միջև գիտական կապերի գարգացման առանձնահատկությունները:

Երկու երկրների միջև գիտական կապերը հիմքը դրվել էր 1964թ., երբ ԽՍՀՄ-ի Գիտությունների Ակադեմիայի նախագահության հրավերով Խորհրդային Միություն այցելեց Արաբական Գիտությունների ակադեմիայի պատվիրակությունը՝ ակադեմիայի նախագահ գլխավորությամբ:

Սիրիայի և Խորհրդային Միության միջև մշակութային համագործակցության վերաբերյալ առաջին պայմանագրի կնքվել էր Դամասկոսում դեռևս 1956թ օգոստոսի, 26-ին, որը նախատեսում էր փորձի փոխանակում գրականության, արվեստի, գիտության, կրթության և այլ ոլորտներում: Գիտական ու մշակութային տարրեր ծրագրերով ամեն տարի ԽՍՀՄ էին մեկնում սիրիացի ուսանողների մեջ խմբեր:

Սիրիացի ուսանողները խորհրդային բուհեր մուտք գործեցին 1956թ-ից սկսած, իսկ 1972թ. նրանց թիվն արդեն հասնում էր 1040-ի՝ 812 ուսանող, 174 ասպիրանտ, 54 ստաժոր: Սիրիացի ուսանողների թվաքանակի մեծացման միտումները ԽՍՀՄ-ի բուհերում պահպանվեցին նաև հաջորդ տարիների ընթացքում: Բուհերում նրանց համար կարդում էին հատուկ դասախոսություններ՝ հաշվի առնելով այն տարածաշրջանի առանձնահատկությունները, որտեղ հետազայում պետք է աշխատեին այդ մասնագետները:

Միաժամանակ միջոցներ էին ծեռնարկվում բուն Սիրիայում մասնագետներ պատրաստելու նպատակով, քանի որ միայն արտասահմանում կադրերի պատրաստումը բավարար չէր:

Բացի ուսանողներից, ասպիրանտներից և ստաժորներից, որակավորման բարձրացման համար Սիրիան Խորհրդային Միություն էր ուղարկում նաև գյուղատնտեսության տարրեր բնագավառների մասնագետների:

ԽՍՀՄ-ի օգնությամբ ստեղծվեցին գյուղատնտեսական գիտական կենտրոններ, որոնց ուսումնասիրման առարկան անտառային տնտեսությունն էր և հողատարածքների մշակումն ու ոռոգումը:

Գլխի Երկրորդ Ենթարամնում՝ «Խորհրդա-սիրիական գիտական համագործակցությունը 1966-1976թթ.», մերկայացվում են Երկու երկրների միջև գիտական կապերի գարգացման առանձնահատկությունները:

Երկու երկրների միջև գիտական կապերը հիմքը դրվել էր 1964թ., երբ ԽՍՀՄ-ի Գիտությունների Ակադեմիայի նախագահության հրավերով Խորհրդային Միություն այցելեց Արաբական Գիտությունների ակադեմիայի պատվիրակությունը՝ ակադեմիայի նախագահ գլխավորությամբ:

1966թ. դեկտեմբերի վերջին և 1967թ. հունվարի սկզբին Սիրիայում էր գտնվում ԽՍՀՄ-ի Ա.Վ.Վիշնևսկու անվան վիրաբուժական ինստիտուտի բժիշկ-գիտնականների խումբը, որն ուսումնասիրում էր Երկրում վիրաբուժության ոլորտում առկա խնդիրները:

1972թ. ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի ընդունեց Յալեպի համալսարանի գիտական խորհրդի պատվիրակությանը, որը ծանոթանում էր օրգանական քիմիայի, գիտական խորհրդի պատվիրակությանը, որը ծանոթանում էր գիտական գիտական խորհրդի պատվիրակությանը:

արևելագիտության, օպերատիկ վիրաբուժության բնագավառներում ԽՍՀՄ գիտական հմտություններում կատարված գիտական հետազոտություններին:

Գիտական համագործակցության մասին կնքված մի քանի պայմանագրերի համաձայն, ամեն տարի երկու երկրների ամենահեղինակավոր գրադարանների միջև իրականացվում էր գիտական գրականության և միկրոֆիլմերի, ձեռագրերի փոխանակում:

Երկու երկրերի միջև կնքվում էին նաև գիտական ու տեխնիկական համագործակցության վերաբերյալ պայմանագրեր և համաձայնագրեր:

Գլխի Երրորդ Ենթարաժնում՝ «Երկողմ համագործակցությունը առողջապահության, սպորտի և արվեստի բնագավառներում», ուսումնասիրվում են 1966-1976թթ. երկու երկրների միջև վերոնշյալ բնագավառներում իրականացված համագործակցությունը:

ԽՍՀՄ-ի ու Սիրիայի միջև համագործակցությունը ներառում էր նաև առողջապահության ոլորտը: Խորհրդային «Կարմիր խաչ» կազմակերպության միջոցով Խորհրդային Միությունը մի քանի անգամ Սիրիային ցուցաբերել է դրամական ու նյութական օգնություն:

1975թ. վետրվարին ԽՍՀՄ-ի ու Սիրիայի միջև կնքվեց առողջապահության և բժշկագիտության ոլորտի վերաբերյալ համաձայնագրի, ինչը Ենթադրում էր պրոֆիլակտիկ հատուկ միջոցառումների նախաձեռնում՝ իմֆեկցիոն հիվանդությունների դեմ պայքարելու համար:

Ազգային արվեստին ծանոթանալուն նպաստում էր նաև խորհրդային տարբեր պետություններում արվեստի տասնորյակմերի անցկացումը:

Համաձայն ԽՍՀՄ-ի ու Սիրիայի միջև մշակութային համաձայնագրի՝ խորհրդային կոմսերվատորիայի պրոֆեսորները Դամասկոսում անցկացնում էին դաշնամուրի, ջութակի, քավշութակի դասեր: Իսկ Սոսկովյան կոմսերվատորիայում սովորում էին գգալի թվով սիրիացիներ:

Խորհրդային Միության և Սիրիայի միջև ակտիվ համագործակցություն էր իրականացվում նաև կիմոարվեստի բնագավառում:

1975թ. ԽՍՀՄ և Սիրիայի միջև սոորագրվեց արձանագրություն՝ սպորտային համագործակցության մասին:

Գլխի չորրորդ Ենթարաժնում՝ «Դասարակական կազմակերպությունների դերը երկու երկրների միջև մշակութային կապերի զարգացման գործում», լուսաբանվում են այն հասարակական կազմակերպությունների գործունեությունը, որոնք գգալի դեր էին խաղում խորհրդա-սիրիական մշակութային կապերի ամրապնդման գործում:

Խորհրդա-սիրիական կապերի ամրապնդման գործում գգալի դեր ունեց հասարակական կազմակերպությունների ակտիվ գործունեությունը:

Վերջապահության ամփոփվում են ատենախոսության հիմնական արդյունքները, ներկայացվում են հեղինակի եզրակացությունները.

1. Ուսումնասիրվող ժամանակաշրջանում խորհրդա-սիրիական երկողմ հարաբերություններն ընդգրկում էին հետևյալ երեք ոլորտները՝ քաղաքական, առևտուրամտեսական և մշակությամբ:

2. 1966թ. Սիրիայում ձախրասականների իշխանության գալով խորհրդա-սիրիական հարաբերությունները մտան որակական նոր փուլ: Որդեգրելով Սիրիայում «աղջիալխստական հասարակություն» ձևավորելու կարգախոսը՝ երկրի իշխանություններն ակտիվացրեցին ԽՍՀՄ-ի հետ քաղաքական, տնտեսական և մշակության համագործակցությունը: Բաասի ձախակողմյան թվի իշխանության գալով՝ ԽՍՀՄ-ի համար նոր հնարավորություն ստեղծվեց հնչպես Սիրիայում, այնպես էլ ողջ տարածաշրջանում իր քաղաքական, տնտեսական և ամենակարևորը՝ գաղափարական ազդեցության տարածման ուժեղացման համար:

3. Վրաբախրայելյան հակամարտության սրման՝ հատկապես 1967 և 1973թթ. պատերազմների համատեքստում, Սիրիայի համար հատուկ մշակություն էր ծերը բերում ԽՍՀՄ-ի ցուցաբերած ռազմական աջակցությունը ու գենքի ուղղակի մատակարարությունը: Յատկանշական է նաև, որ արաբախրայելյան հակամարտությունն ու նրանում ներգրավված կողմերի միջև ընթացող ռազմական գործողությունները սառը պատերազմի պայմաններում, դաշտ էին ստեղծվում խորհրդային սպառագինությունների փորձարկան համար:

4. 1970թ. նոյեմբերին Սիրիայում Յաֆեզ Ասադի իշխանության գալու ու «ուղղէ շարժման» հոչակումը երկողի ներքաղաքական և արտաքին քաղաքական, ինչպես նաև սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման նոր փուլի սկիզբն էին: Թեև իր կառավարման առաջին տարիներին Յաֆեզ Ասադը շարունակում էր առաջնային տեղ հատկացնել ԽՍՀՄ-ի հետ հարաբերություններին, սակայն 1973թ. հոկտեմբերի արաբախրայելյան պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված նոր իրադրությունը ստիպեց վերջինս որոշակի փոփոխություններ կատարել իր արտաքին քաղաքական կողմնորոշումներում: Վերոնշյալ պատերազմից հետո Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթի արտաքին քաղաքական ուղեգծի փոփոխությունը ու ԱՍՍ-ի հովանու ներքո Խարայելի հետ անջատ համաձայնագրի կնքելու քաղաքականությունը, 1975թ Լիբանանում բռնկված քաղաքացիական պատերազմն ու տարածաշրջանային այլ իրողությունները 1970-ականների կեսին ստիպեցին Սիրիային ակտիվացնել իր

շփումներն Արևմուտքի՝ մասնավորապես ԱՄՆ-ի հետ և վերանայել բացառապես ԽՍՀՄ-ի հետ մերձեցման քաղաքականությունը: Այս ամենի հետևանքով 1970-ականների երկրորդ կեսից սկսած խորհրդա-սիրիական հարաբերություններում նկատելի է դառնում որոշակի սառեցում, որը շարունակվում էր 1980-ականներին:

5. Ուսումնասիրվող շրջանին հաջորդած տարիներին՝ ընդհուազ մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը, չնայած խորհրդա-սիրիական հարաբերություններում առկա որոշակի սառեցմանը, այնուամենայնիվ, երկողո՞ւմ շահերից ելնելով հարաբերությունները շարունակվում էին՝ ներառելով տնտեսական և մշակութային ոլորտները, ինչի ապացույցն է 1980թ. կնքված խորհրդա-սիրիական համաձայնագիրը:

Թե ԽՍՀՄ-ը և թե Սիրիայի Արաբական Հանրապետությունը ուսումնասիրվող շրջանում շահագրգռված էին երկողո՞ւմ քաղաքական, տնտեսական և մշակութային կապերի ընդլայնմամբ և ակտիվացմամբ: Կողմերից յուրաքանչյուրն իր շահերից ելնելով՝ փորձում էր առավելագույն օգուտ քաղել խորհրդա-սիրիական հարաբերություններից: ԽՍՀՄ-ը Սիրիայի հետ հարաբերությունների բարելավմամբ փորձում էր իր ռազմավարական դիրքերն ամրապնդել մերձավորանելու տարածաշրջանում: Սիրիան, իր հերթին, օգտագործելով ԽՍՀՄ-ի հետ իր համագործակցությունը, փորձում էր ամրապնդել տարածաշրջանում իր դիրքերը՝ ԽՍՀՄ-ից ստանալով դիվանագիտական, ռազմական, ֆինանսական և տնտեսական բազմակողմանի աջակցություն:

ԱՅԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՍԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սիրիայի և խորհրդային Միության ֆինանսավարկային հարաբերությունները (1966-1976թթ.), Գիտություն և տեխնիկա, հ. 5, Երևան 2007, էջ 17-20:
2. ԽՍՀՄ-ի աջակցությունը սիրիական կաղողի պատրաստման գործում (1966-1976թթ.), Արաբագիտության ուսումնասիրություններ, հ. Բ, Երևան 2007, էջ 32-39:
3. Խորհրդա-Սիրիական քաղաքական կապերի զարգացումը (1966-1970 թթ.), Արաբագիտության ուսումնասիրություններ, հ. Բ, Երևան 2007, էջ 16-31:

Азатян Гегам Гришаевич

“СОВЕТСКО-СИРИЙСКИЕ ОТНОШЕНИЯ 1966-1976”

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук
по специальности 07.00.02 – “Всемирная история”

Защита состоится 18-го июня 2007 г. в 15:00 часов на заседании специализированного совета
006, по адресу: 0019 г. Ереван, просп. Маршала Баграмяна 24г., Институт Востоковедения
НАН РА.

РЕЗЮМЕ

Изучение советско-сирийских отношений с 1966 по 1976гг. имеет политическую
важность и научную актуальность.

Во время холодной войны противостояние США и СССР непосредственно
отражалось и на ситуации на Ближнем Востоке, в том числе и на отношениях СССР с его
региональными союзниками.

Изучаемый период советско-сирийских отношений, который является частью
советско-арабских отношений, по праву можно считать одним из самых динамичных этапов
развития.

В течение холодной войны СССР обращал особое внимание на развитие отношений с
Сирией, считая ее одной из главных союзников в регионе.

Актуальность темы диссертации обусловлена важностью системного изучения
политических, военных, экономических и культурных отношений между Сирией и СССР.

Изучение советско-сирийских отношений данного периода ценно и по причине того,
что именно этот период были на практике осуществлены заключенные ранее договоры
между двумя странами, что подняло отношения на качественно новый уровень.

Изучение темы важно также для более верного понимания политики СССР в
отношении ближневосточного конфликта в изучаемый период.

Анализ советско-сирийских отношений в 1966-1976 гг. полезен с точки зрения оценки
изменений, произошедших в российско-сирийских отношениях после распада СССР.

В первой главе диссертации (Советско-сирийское политическое сотрудничество)
освещается история установления советско-сирийских отношений, рассматриваются
основные аспекты советско-сирийского политического сотрудничества и межпартийных
связей между КПСС и ПАСБ, а также военного сотрудничества в период с 1966 по 1976гг.

Вторая глава диссертации (Развитие торгово-экономических отношений между СССР
и Сирией) посвящена многообразным аспектам советско-сирийских торгово-экономических
связей, рассматриваются торговые отношения, экономическое и техническое содействие
СССР, а также кредитно-финансовые взаимоотношения двух стран.

В третьей главе диссертации (Советско-сирийские культурные связи) анализируется
сотрудничество двух стран в сфере культуры, где рассматривается развитие научных связей,
сотрудничество в области здравоохранения, спорта и искусства, а также роль общественных
организаций в развитии культурных связей между двумя странами.

На основании проведенного исследования в заключении диссертации делаются
выводы по основным рассмотренным вопросам.

Gegham Azatyan

SOVIET -SYRIAN RELATIONS IN 1966-1976

